

Առաջարկվող ծրագրեր

Ընդունելության ընթացակարգը

Հիմնական դրույթներ

Բուհն ավարտելու պահանջները

Երևանի պետական լեզվաբանական համալսարանը ավարտելու համար (Լեզվաբանության բակալավրի գիտական աստիճանին հավակնելու դեպքում) ուսանողները պետք է բավարարեն դասընթացներ ընտրելու հետևյալ երեք կարգի պահանջներին: Անցած լինեն՝

1. պարտադիր դասընթացներ, որոնք պահանջվում են պետական օրենսդրությամբ,
2. պարտադիր կամընտրական դասընթացներ, որոնք պահանջվում են Համալսարանի քաղաքականությամբ,
3. կամընտրական դասընթացներ՝ ըստ ուսանողների նախընտրության:

Բակալավրի գիտական աստիճան ստանալու պայմանները

Գրանցում

Գիտական նշված աստիճանը ստանալու համար նվազագույնը 240 ԿՓԵՀ (Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ) կրեդիտ է անհրաժեշտ: Առանձին մասնագիտացումների դասընթացները նկարագրված են ԵՊԼՀ առարկայացանկերում: Դասընթացներն ավարտած և բակալավրի գիտական աստիճանի թեկնածուներ համարվող ուսանողները գրանցվում են այդ գիտական աստիճանի կոչման համար: Բակալավրի թեզը գրելիս նրանք կարող են ունենալ ղեկավար: Գրանցվածները համարվում են բակալավրի *ակտիվ* ուսանողներ. գրանցումը նրանց ընձեռում է՝

1. իրենց ղեկավարների հետ հանդիպման հնարավորություն,
2. բակալավրի գիտական աստիճանի համալիր քննությունների հանձնման կամ թեզ պաշտպանելու և կամ էլ թղթապանակ պատրաստելու հնարավորություն,
3. Համալսարանի գիտատեխնիկական բազայից ու սարքավորումներից օգտվելու պայմաններ,
4. ստանձնած աշխատանքը բարեհաջող ավարտելու հնարավորություն:

Բակալավրի գիտական աստիճանին հավակնողները պետք է գրանցվեն թեզ գրելու համար:

Մագիստրոսի գիտական աստիճան ստանալու պայմանները

Գրանցում

Դասընթացներն ավարտած և մագիստրոսի գիտական աստիճանին հավակնող ուսանողները գրանցվում են մագիստրոսի գիտական աստիճան ստանալու համար: Գրանցվածները համարվում են մագիստրոսի գիտական աստիճանին ձգտող *ակտիվ* ուսանողներ. գրանցումը նրանց ընձեռում է՝

1. իրենց ղեկավարների հետ հանդիպման հնարավորություն

2. մագիստրոսի գիտական աստիճանի համալիր քննությունների հանձնման կամ թեզ պաշտպանելու և կամ էլ թղթապանակ պատրաստելու հնարավորություն,
3. Համալսարանի գիտատեխնիկական բազայից ու սարքավորումներից օգտվելու պայմաններ,
4. ստանձնած աշխատանքը բարեհաջող ավարտելու հնարավորություն:

Մագիստրոսի գիտական աստիճանին հավակնող բոլոր թեկնածուները պետք է գրանցվեն թեզ գրելու համար:

Դասընթացի ծանրաբեռնվածությունը մեկ կիսամյակում

Բակալավրի գիտական աստճանի համար մեկ կիսամյակում առավելագույն ծանրաբեռնվածությունը 7 դասընթաց է , մագիստրոսինը՝ 5:

Գնահատման սկզբունքներ

Դասընթացի գնահատականներ

Կիսամյակի ավարտին ԵՊԼՀ դասընթացների համար ուսանողի առաջադիմության թերթիկում կմուտքագրվեն հետևյալ գնահատականները:

Տոկոսներ	GPA	ԿՓԵՅ գնահատական	Մեկնաբանություն
90%-100%	4.0	A	Անցողիկ գնահատականներ
80%-89%	3.5	B	
70%-79%	3.0	C	
65%-69%	2.5	D	
60%-64%	2.0	E	
55%-59%		FX	Անբավարար՝ որոշակի աշխատանքներ կատարելու և հանձնելու հնարավորություն ունի
55%-ից ցածր		F	ԱՆԲԱՎԱՐԱՐ՝ ենթակա է դասընթացը կրկնելու

Բոլոր դասընթացները գնահատվում են ըստ բերված աղյուսակի՝ հետևյալ բացառությամբ.

աշխատանքային պրակտիկան ղեկավարողները այդ աշխատանքը կարող են ներկայացնել «Հանձնել է / Չի հանձնել» հաշվետվությամբ, որը դրական գնահատման դեպքում տալիս է համապատասխան կրեդիտը:

Գրագողություն և այդ ուղղությամբ վարվող քաղաքականությունը

Ըստ այս քաղաքականության՝ գրագողություն է համարվում որևէ մեկի աշխատանքը որպես սեփականը ներկայացնելը: Սա ներառում, սակայն ստորև բերվածներով չի սահմանափակվում.

- Որևէ մեկի բառերն անփոփոխ օգտագործելը՝ առանց դրանք չակերտների մեջ առնելու կամ այլ կերպ առանձնացնելու և փակագծերում նշելու հեղինակի անունը, աշխատանքի վերնագիրը, հրատարակման մասին տեղեկությունն ու մեջբերված էջերի համարները,

- Որևէ մեկի մտքերը սեփական բառերով վերաշարադրելը՝ չնշելով հեղինակի անունը, աշխատանքի վերնագիրը, հրատարակման մասին տեղեկությունը և այն էջերի համարները, որտեղից այդ միտքը քաղված է,
- Մեկ այլ ուսանողի առաջադրանքից բառերի, մտքերի, անգամ կետադրության օգտագործումը, եթե նույնիսկ դրանք փոխել և ձեր սեփական մտքերն եք ավելացրել՝ ունենալով թույլտվություն,
- Մեկ ուրիշին ձեր ամբողջ առաջադրանքի կամ դրա մի մասի գրել տալը:

Վերոհիշյալ խախտումները թույլ տված ուսանողը կամ ուսանողները այդ դասընթացի համար կստանան «գրո», ավելին՝ կորցրած կրեդիտը վերականգնելու ոչ մի հնարավորություն չի տրվի նրանց:

Բավարար աշխատանք

ԵՐՊԼՀ-ի բոլոր ուսանողներից ակնկալվում է միջին որակավորման գնահատականի ***նվազագույնը 2.0***՝ միավորի ապահովում՝ բոլոր դասընթացներից. սա համապատասխանում է բակալավրի գիտական աստիճանի պահանջներին, որը սակայն բավարար չէ ավելի բարձր աստիճանի՝ մագիստրոսի գիտական աստիճանին դիմելու համար: Վերջինս հնարավոր է առնվազն 3.0 միջին որակավորման գնահատականը ապահովելու դեպքում: Բավարար ուսումնառության այս նվազագույն չափորոշիչի պահպանումը ձախողելու դեպքում ուսանողը կարող է հեռացվել ԵՊԼՀ-ում հետագա ուսումնառությունից:

Ի լրումն միջին գնահատականի պահանջների, ԵՊԼՀ-ում բոլոր գիտական աստիճանների ծրագրերում ուսուցման շարունակությունը կախված է ծրագրի բոլոր փուլերում բավարար աշխատանքի պահպանումից. այդ մասին եզրակացնում է կամ ուսանողի ղեկավարը, կամ թեզերի պաշտպանումն իրականացնող հանձնաժողովը: Բավարար աշխատանքի կատարման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է Գիտական աստիճաններ շնորհող հանձնաժողովը:

Բավարար առաջադիմություն

Երկու անընդմեջ տարիների ընթացքում գիտական աստիճանի պահանջների կատարման ուղղությամբ էական առաջադիմության պակասը (եթե պաշտոնապես արձակուրդ չի տրվել) ավտոմատ կերպով կդադարեցնի թեկնածությունը կամ իրավասությունը թեկնածության համար դիմելու: Ուսանողի ղեկավարը կամ թեզերի պաշտպանումն իրականացնող հանձնաժողովն է գնահատում բավարար առաջադիմությունը: Ուսանողները պետք է նախաձեռնություն ցուցաբերեն՝ ղեկավարներին ապացուցելու իրենց շարունակական առաջադիմությունը. նման ապացույցի բացակայության պարագայում ղեկավարները ամեն կիսամյակ կարող են տեղեկացնել իրենց ուսանողի կարգավիճակի մասին և ուսանողին ուղարկել թեզերի պաշտպանումն իրականացնող հանձնաժողով:

Անավարտ աշխատանք (FX)

Ակնկալվում է, որ ուսանողները պետք է ավարտեն ամբողջ դասընթացը հենց այն կիսամյակում, որի ընթացքում այդ դասընթացը վերցրել են: Մինչդեռ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը ուսանողին կարող է գնահատել անբավարար, եթե նա ի վիճակի չէ ավարտել դասընթացի առաջադրանքները մինչև կիսամյակի վերջը: ԵՊԼՀ որևէ դասախոսից չի պահանջվում (FX) նշանակել: Յուրաքանչյուր *ֆակուլտետի* պրոֆեսորադասախոսական կազմն է որոշում՝ որ դեպքում (FX) տալ: Իսկ երբ նշանակվում է անբավարար, ապա թե՛ հիշյալ կազմը, թե՛

ուսանողը պետք է ենթարկվեն բուհի կանոնակարգին. վերջինով է պայմանավորվում դասընթացի ժամանակին ավարտելը:

Բոլոր անավարտ աշխատանքները պետք է հանձնել մինչև բակալավրի/մագիստրոսի քննության հանձնման համար նախատեսված գրանցման վերջնաժամկետը: Եթե ուսանողն անընդմեջ անբավարար գնահատականներ է ստանում որևէ դասընթացից, որը նախորդում է մագիստրոսի համալիր կամ նախնական քննություն հանձնած կիսամյակին, ապա դասընթացի համար բոլոր կատարվելիք աշխատանքները պետք է դասախոսին հանձնվեն այն կիսամյակի առաջին շաբաթում, որի ընթացքում քննությունը պետք է հանձնվի: Բակալավրի/Մագիստրոսի համալիր կամ նախնական քննության ցանկացած անբավարար գնահատական, որը կհայտնվի ստուգման գրքույկում, կհամարվի «Մշտական անբավարար» և կարող է այլևս չհանվել անձնական թերթիկից: Սույն սկզբունքից բացառություններ կարող են կատարվել ֆակուլտետի ղեկանին հայցով դիմելու դեպքում:

Մեկամյա ժամանակահատված. Անբավարար ստանալու կիսամյակի ավարտից հետո ամբողջ դասընթացի աշխատանքները ավարտելու համար ուսանողներն ունեն մեկ տարի ժամանակ, եթե.

- ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը գրավոր չի տեղեկացրել ուսանողին ավելի կարճ ժամկետ հատկացնելու մասին, կամ
- ուսանողին չի տրվել մեկ տարվա տարկետման ժամանակահատված ֆակուլտետի ղեկանի կողմից՝ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի երաշխավորագրի հիման վրա:

Մեկ տարվա տարկետման ժամանակահատվածում դասընթացի աշխատանքների ավարտման ընթացակարգը

1. Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին անհրաժեշտ է առնվազն երեք շաբաթ՝ ուշ հանձնված առաջադրանքները կարդալու և գնահատելու համար: Ֆակուլտետի առանձին դասախոսների կողմից կարող է ավելի շատ ժամանակ պահանջվել այդ աշխատանքի համար, հատկապես կիսամյակի վերջում: Ուսանողի պարտականությունն է պարզել, թե որքան ժամանակ է անհրաժեշտ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին՝ վերանայելու դասընթացի աշխատանքը և ներկայացնելու գնահատականը:
2. Ուսանողի և դասախոսի միջև նախնական համաձայնություն չլինելու դեպքում ուսանողը չի կարող ակնկալել, թե իր աշխատանքը կվերանայվի ամառվա ընթացքում: Հենց որ ուսանողը այդ նպատակով ֆակուլտետ է հանձնում ամբողջ աշխատանքը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը գնահատում է այն և ուղարկում համապատասխան ղեկանատ՝ ստորագրված և ամսաթիվը նշված:
3. Դեկանատը պետք է ստանա գնահատականի փոփոխությունը մինչև կիսամյակի ավարտը, այսինքն՝ դասընթացը վերցնելու կիսամյակից մեկ տարի հետո: Բացի այդ, ղեկանատին անհրաժեշտ է մեկ շաբաթ՝ գնահատականի փոփոխման տեղեկությունը գրանցելու համար:
4. Եթե ուսանողն աշխատանքը հանձնելու համար հետևում է ժամանակացույցին, իսկ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմն անկարող է մինչև վերջնաժամկետը ղեկանատ ներկայացնել գնահատականը, ապա ուսանողը չի պատժվում մշտական անբավարար գնահատականով, այլ նրան տարկետում է տրվում:

5. Եթե ուսանողին չի հաջողվում հետևել ժամանակացույցին և մինչև վերջնաժամկետը չի հասցնում դասընթացի աշխատանքը վերանայելու տալ, ապա ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և բուհը պարտավորված չեն գնահատականը փոխանցել դեկանատ սահմանված վերջնաժամկետում կամ երկարացնել ժամանակը:

Մշտական անբավարար (F)

Ցանկացած անբավարար գնահատական (F), որը գրանցվում է ուսանողի առաջադիմության թերթիկում մեկ կամ ավելի տարով, սառեցվում է դեկանատի կողմից որպես «Մշտական անբավարար» (F*): Գրանցողը կիսամյակի ավարտից հետո (այսինքն՝ այն կիսամյակից մեկ տարի հետո, որի ընթացքում այդ դասընթացը վերցրել են) ավտոմատ կերպով F-ը փոխում է F*-ով: Այսպես օրինակ, 2006թ. աշնանը ստացած «F»-ը հաջորդ աշնան կիսամյակի ավարտին դառնում է «F*»: «F*» -ով գրանցված դասընթացների համար ուսման վարձի փոխհատուցում չի լինում: Ցանկացած պահանջվող դասընթաց, որն ունի «F*», պետք է վերահանձնել համապատասխան ուսման վարձ վճարելով:

Բացառություններ. Անբավարար գնահատականի դեպքում բուհի սահմանած ժամանակացույցում ուսանողների համար բացառությունները կատարվում են միայն ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի երաշխավորագրով և դեկանի հաստատմամբ: Տարկետումները սովորաբար հաստատվում են միայն այն դեպքում, երբ ուսանողը ունի՝

1. անձնական կամ ընտանեկան առողջական խնդիրներ կամ շարունակական վատթարացող իրավիճակ
2. երբ ուսանողին զորակոչում են զինծառայության
3. երբ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը ժամանակին չի ներկայացնում գնահատականի փոփոխությունը:

Այլ հանգամանքները քննության են առնվում առանձին-առանձին: Ուսանողները պետք է իրազեկված լինեն, որ բացառություններ սովորաբար չեն արվում այն դեպքերում, երբ ուսանողը հայտնում է, թե ընտանեկան կամ աշխատանքային պարտականությունները խանգարում են ուսումնական պարտականությունները կատարելուն:

Երբ տարկետում է տրվում, ապա նոր ժամանակացույց է սահմանվում դեկանի կողմից՝ խորհրդակցելով ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ: